ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«13» հուլիս 2023թ. N ՄՈ/264-Ա

ք. Արմավիր

«ԲԱՂՐԱՄՅԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆԱՐԵԿ ՏՈՄԻԿՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ և 164-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Նարեկ Տոմիկյանի 2023 թվականի հուլիսի 12-ի դիմումը.

որոշում եմ՝

1. «Բաղրամյանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Նարեկ Տոմիկյանին տրամադրել ամենամյա հերթական երկարացված արձակուրդ՝ 2023 թվականի հուլիսի 13-ից օգոստոսի 16-ը ներառյալ՝ 25 աշխատանքային օր տևողությամբ:
2. Նարեկ Տոմիկյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Բաղրամյանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Բաղրամյանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ուսուցչուհի Անահիտ Հարությունյանին:
3. «Բաղրամյանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ուսուցչուհի Անահիտ Հարությունյանի աշխատավարձի վճարումը 2023 թվականի հուլիսի 13-ից օգոստոսի 16-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Նարեկ Տոմիկյանին աշխատանքի մեջ համարել 2023 թվականի օգոստոսի 17-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 13.07.2023 15:20:02 GMT+4

Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505

ՄԱՐԶՊԵՏ՝

Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ